

ՀԱՅԵՐԵՆԻ «ԱՆՁԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱՌԱԽՄԱՍՏԱՅԻՆ
ԲԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՄԻԿՐՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ բառային իմաստաբանություն, բառախմբատային բազմություն, բառախմբատային խումբ, բառույթ, իմաստային կառուցվածք, գեր-իմաստույթ, միջուկային իմաստույթ, ծայրամասային իմաստույթ:

Նախաբան

Բառագիտությունը՝ որպես լեզվաբանության համեմատաբար ավելի երիտասարդ բաժին, համաշխարհային մասշտաբով իր զարգացման արդյունավետ աստիճանին հասավ միայն XX դարում: Իսկ հայ և ռուս լեզվաբանության պարագայում այդ վերելքը սկսվեց խորհրդային շրջանից՝ հիմնված նախորդ շրջանի լեզվաբանական մտքի (Ֆ. Ֆորտունատով, Ի. Բոգունեն դը Կուրտենե, Ա. Շախմատով, Մ. Պոկրովսկի) երկու հիմնարար դրույթների վրա՝ լեզվի՝ որպես սոցիալական երևույթի և լեզվի համակարգայնության: Հենց բառագիտության մեջ է արտացոլվում այս երկու հատկանիշների կուռ միասնությունը, որոնցով պայմանավորված է լեզվում երկու հայեցակետերի գոյությունը՝ արտաքին սոցիոլեզվաբանական, և ներքին՝ համակարգային-իմաստաբանական: Բառապաշարի, այն է՝ բառի պատմության ուսումնասիրության համար անփոխարինելի աղբյուր է բառարանագրությունը, որի ընձեռած նյութի միջոցով կարելի է տարածամասնակյա քննության ենթարկել լեզվի բառային կազմի արտալեզվական, սոցիալ-պատմական և այլ բնույթի որակական և քանակական տեղաշարժերը: Այս առումով մի ուշադրավ դիտարկում ունի հայագիտության երախտավոր Ստ. Մալխասյանցը, որը, ելնելով այն դրույթից, թե լեզվի բառապաշարի հետազոտությանը կարելի է պատկերացում կազմել ամեն մի ժողովրդի քաղաքակրթական ընթացքի մասին, գրում է. «Եթե հնարավոր լիներ հայոց լեզվի այնպիսի մի բազմահատոր բառարան կազմել, որի յուրաքանչյուր հատոր պարունակելիս լիներ յուրաքանչյուր դարում լեզվի մեջ գործածված բոլոր բառերը, սկսած ութերորդ դարից Քրիստոսից առաջ մինչև մեր օրերը, այդ 27 հատորները միմյանց հետ համեմատելիս՝ մենք կկարողանայինք ճշգրիտ գաղափար կազմել, թե ո՞ր դարում ազգը ի՞նչ բանում ի՞նչ առաջադիմություն կամ հետադիմություն է արել»¹:

* Ներկայացվել է 09. VII. 2024 թ., գրախոսվել է 17. VII. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

¹ Տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 03. XI. 1910:

Բառապաշարի ուսումնասիրության հայեցակերպեր

Յանկացած լեզվի բառապաշարի որակական գարգացման ընթացքի ուսումնասիրության հիմքում, ըստ էության, ընկած է երկու հայեցակերպ սոցիոլեզվաբանական և համակարգային-իմաստաբանական: Առաջինը ենթադրում է բառերը բնութագրել և դասակարգել՝ ըստ արտաքին՝ սոցիալ-պատմական գործոնների (փոխառություններ լեզվի տարբեր գոյավիճակներից), ըստ բառերի գործածականության հատկանիշի (հնաբանություններ, նորաբանություններ), ըստ բառերի կիրառության մասնագիտական ոլորտների (տեղանիներ), երկրորդ՝ երբ քննության կենտրոնում բառի ներքին իմաստաբանական կառուցվածքն է, բառապաշարի որակես համակարգի դիտարկումը:

Հայ լեզվաբանության մեջ հայերենի բառային կազմի իմաստաբանական քննությունը սահմանափակվել է կա՛մ ծագումնաբանական (բառերի կամ արմատների՝ ըստ թեմատիկ իմաստային դաշտերի տարածամասնակյա նկարագրության)², կա՛մ բառիմաստի փոփոխության տեսակների³, կա՛մ բառակազմական իմաստաբանության շրջանակում⁴ և այլն: Այս համատեքստում առանձնակի հիշատակման է արժանի է. Աթայանի լեզվաբանական, նշանագիտական, լեզվափոխությունային հիմնարար հետազոտությունը⁵, որտեղ լեզվական և ոչ լեզվական աշխարհների պրիզմայում քննվում են լեզվական միավորների ներքին ձևավորումն ու գործառությունը, լեզվի նշանային, հաղորդակցման, ստորոգման և այլ համակարգերի փոխկապակցված դիալեկտիկական միասնության հարցերը: Հիշատակման արժանի է նաև Պ. Բեդիրյանի բառիմաստների թեմատիկ բառարանը⁶, որտեղ բառերի թեմատիկ իմաստային խմբերը միաժամանակ ներկայացվում են՝ ըստ նրանց խոսքիմասային պատկանելության:

Յանկացած բառ բազում հարաբերություններով անմիջականորեն կապված է հարյուրավոր բառերի հետ, իսկ հազարավորների հետ էլ այդ կապը միջնորդավորված է: Անշուշտ, այդ հարաբերություններում գլխավորը իմաստային հենքն է, որն օժտված է այս կամ այն չափով կրկնվող ձևային նմանությամբ ու տարբերությամբ: Բառային հարացույցը ներկայացնող բառային հակադրությունների միջև առկա կապերի տեսանկյունից լեզվի բառային կազմը ներկայանում է որպես առանձին բառերի՝ միմյանց հետ խաչաձևվող կապերի մի բարդ ու բազմաշերտ ցանց, որը հնարավոր է մեկնաբանել բառային հարացույցի մեկ այլ՝ ավելի ընդգրկուն տեսակով՝ բառերի դասերով, որոնք ձևական-քերականական կամ իմաստային հատկանիշներով կապված բառերի միավորումներ են: Սրանք ենթադրում են բառային միավորումների առավել ծավալուն ու բարդ հարացույցներ (բառաիմաստային բազմություններ, ենթաբազմություններ, խմբեր և այլն), քան բառային հակադրություններն են (հոմանիշություն, հականիշություն, համանունություն, հարանունություն և այլն): Յանկացած դասի հիմքում ընկած է բառերի նմանության սկզբունքը՝ ըստ

² Ա ճ ա ո յ ա ն. 2013, 108–112, Ջ ա հ ու կ յ ա ն. 1987:

³ Մ ու ը Վ ա լ յ ա ն. 1955, Բ ե դ ի ը յ ա ն. 1973, 218–248, Ա դ ա յ ա ն. 1980, 198–268, Ա դ ա յ ա ն. 1984, 169–189:

⁴ Ջ ա հ ու կ յ ա ն. 1989:

⁵ Ա թ ա յ ա ն. 1981:

⁶ Բ ե դ ի ը յ ա ն. 2019:

որևէ ընդհանուր բաղադրիչի: Լեզվի բառային համակարգի իմաստային համակցելիության խճանկարում վերոնշյալ բառերի դասերում առավել տիպական կարող են լինել բառափմաստային խմբերը (միկրոհամակարգերը)⁷ իմաստային հարաբերությունների քննության տարբեր տիպերով⁸:

Բառույթների իմաստային կառուցվածքի քննություն

«Անառակություն, ցոփաբարդություն, կնամողություն, գինեմողություն» բառափմաստային խումբը գոյական խոսքի մասի մակրոդասի «Անձերի անվանումներ» բառափմաստային բազմությունում գործառուղ «Ըստ բնավորության գծերի և դրանցով բնորոշվող վարքագծի» ենթաբազմության 22 բառափմաստային խմբերից՝ միկրոհամակարգերից մեկն է: Եվ քանի որ բառափմաստային խումբը ձևավորվում է՝ ըստ նրանում ընդգրկված բառույթների հասկացական ընդհանրության, ուստի հետաքրքրություն է ներկայացնում քննել նրանում ընդգրկված բառային միավորների բառույթների իմաստային կառուցվածքի զարգացման բառարանագրական մշակումները ժամանակագրական կարգով հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը, ի հայտ ենք բերելու բառույթների՝ պատմական այդ հսկա ժամանակահատվածում կրած իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմները, նաև բառափմաստային այլ խմբերի հետ հարաբերվելը:

Քննվող բառափմաստային խմբում գործառուղ են անառակ, կնամող, հարձ, վարձակ, պոռնիկ, գինեմող, հայրատ⁸, ինչպես և բաքոսի քրմուհի, բորբորիտ, մախազ, սաստիլ, սրտակեր, սիրառածու բառույթները, որոնք ներկա քննության առարկան են: Այսպես.

Բաքոսի քրմուհի

Հին հայերենում չի վկայվել: Հին հռոմեական դիցաբանության մեջ գինու և խրախճանքի աստծո անունն է (լատ.՝ Bacchus): XX դարասկզբի վկայություններում⁹ գործածվել է որպես դիցաբանական տերմին՝ «գինու չաստված»:

⁷ Լեզվի բառափմաստային համակարգը տարրորոշվում է իմաստային հարաբերությունների 3 հիմնական տիպերով՝ ըստ տարիմաստություն (հոմանիշային շարք), երբ շարքի անդամների նշանակություններն ամբողջությամբ կամ մեծապես համընկնում են (հմմտ. սեր-հրապուրանք-համակրանք-կիրք-մտերմություն), ըստ հավաքություն (հականիշային զույգ), երբ զույգի անդամները ներկայանում են հակադիր նշանակությամբ (հմմտ. սեր-ատելություն), ըստ համալցման (հմմտ. իմաստային դաշտ), երբ ձևավորվում են բառերի ամբողջություններ, որոնք դասվում են նույն առարկայական-հասկացութային ոլորտին՝ գույներ, կենդանիներ, կահույք և այլն: Այս տիպը ներկայանում է իմաստային հարաբերությունների 2 ենթատեսակով՝ հարացուցային (թեմատիկ շարքեր), երբ դաշտում բառերը միավորված են փոխկապակցվածության, հակադրականության և պայմանավորվածության հարաբերություններով (հմմտ. սեր, հարգանք, բնկերություն, նախանձ, ձանձրություն և այլն) և հիերարխիկ կամ աստիճանակարգային (սեռատեսակային խմբավորում), երբ դաշտում բառերի ամբողջությունը միավորված է ստորադասման և ներառման հարաբերություններով (հմմտ. զգացմունք-սեր, զգացմունք-հարգանք, զգացմունք-նախանձ):

⁸ Այս բառույթների իմաստային կառուցվածքի քննության մասին տե՛ս Մ ա Ր - տ ի Ր Ո Ս Յ ա ն. 2023, 168–183:

Տե՛ս և հմմտ. «ԲԱՔՈՍ-կամ Վակիս, գինու չաստվածը: Ըստ հին աւանդութեան, Բաքոսն է սովորեցրել մարդոց գինեգործությունը: Հին ժամանակ Բաքոսի պատվին աղմկալից խնճոյքներ էին սարքում, ուր սանձարձակօրեն նւիրվում էին

Հետագա վկայություններում բացի գինու և խրախճանքի աստծու անվան միջոցառումից՝ փոխաբերաբար իրացրել է նաև գոյականի արժեքով «Հարբեցողություն, գինարբուք, կերուխում» ընդհանրական իմաստով (Հմմտ. «գ. Հին Հռոմայեցոց դիցաբանությունների մեջ գինու և խրախճանքի աստծու անունը. փոխ. գինի, արբեցողություն», Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1944, հ. Ա, 357, Հմմտ. նաև՝ Ա դ ա յ ա ն. 1976, 184), ավելի ուշ՝ ուհի իգական անունի հավելումով (բաբոսուհի) կայունացել է բաբոսի քրմուհի անվանական հարադրությունը՝ փոխաբերաբար իրացնելով «Հեշտասեր կին» գերիմաստությունը¹⁰ [Հմմտ. «գ. 1. Բաբոսի քրմուհի (հին Հռոմում): 2. փխբ. Հեշտասեր՝ վավաշոտ՝ ցոփ կին», Ա դ ա յ ա ն. 1976, 184]¹¹:

Բորբորիտ

Հին հայերենյան փոխառություն հունարենից՝ «տիղմ, զարչահոտ ցեխ» իմաստով, համանուն քրիստոնեական աղանդի անունից¹²: Վկայվել է բորբո-

անբարոյական գործողությունների. այդպիսի խնճոքները կոչվում էին «վակխանալիա» [Հմմտ. Տ է ր-Ղ ա գ ա ր ե ա ն. 1908, 50, տե՛ս և Հմմտ. նաև՝ «Հաստուած գինույ (դից.)», Գ ա բ ա մ ա ճ ե ա ն. 1910, 270]:

¹⁰ Բառերի որոշակի դասի բոլոր միավորներին բնորոշ սեռանիշ համակցող իմաստով, որն արտահայտում է նրանց ընդհանուր կարգային հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք արտացոլվում են իմաստաբանական բառարաններում թեզաւրուաներում: Բացատրական բառարաններում սովորաբար մատուցվում է իմաստի վերացարկման առավել ցածր աստիճանը, քանի որ այդպիսի գերիմաստությունն առավել տեղեկաբեր է բառարանից օգտվողների համար:

Կայունացել են նաև բաբոս-ի հարադրությամբ գոյականի, ածականի, բայական արժեքով դարձվածքները (Հմմտ. բաբոսյան պատարազ՝ «գինարբուք», բաբոսի երկրպագու՝ «կերուխում սիրող», բաբոսին տուրք տալ՝ «կերուխում անել», բաբոսին ուխտ գնալ՝ «հարբել», Ա դ ա յ ա ն. 1976, 184): Բարբառներում իրացվել է բաբոս սերող հիմքով բաբվատոն բաղադրությունը (Հմմտ. «գ. Բաբոսին նուիրված ժողովրդական տօնը Հին Հռոմում, որի ժամանակ հանդէսներ էին կատարում. անձնատուր լինում արբեցողության և սեռական խառնակութեան», Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1944, հ. Ա, 357), նաև՝ բազում շրջաստություններ, որոնք կիրառական առումով առավելապես գեղարվեստական գրականության հեղինակային իրողություններ են [Հմմտ. բաբոսական հանցանք՝ «խմիչքով տարվել», բաբոսի աղջիկներին առնել՝ «ուտել-խմել. գվարճանալ (կանանց հետ)», բաբոսի աշակերտ (պաշտոնյա)՝ «գինեմուլ», բաբոսի տաճար՝ «գինետուն», բաբոսի տակառ՝ «գինու տակառ» և այլն, տե՛ս և Հմմտ. Բ ե դ ի ը յ ա ն. 2010, 54]:

¹² Հմմտ. «(Յուն.), գ. 1. քրիստոնեական աղանդ, որ հաւանաբար սկիզբ առած է Ասորիքէն. ամէն օրէնք եւ պաշտամունք աւելորդ կը համարէր. պարզ աղօթք մը բաւական կը սեպէր մեղքերէ սրբութիւն. հեթանոսաբար կը գործէր ամէն անկարգութիւն, ամբարշտութիւն ու պղծութիւն, յափշտակութիւն ու եղեռնագործութիւն: Հայաստանի մէջ ծանօթ է Մծղնէ-Մծղնեայք անունով թարգմանվելով ասորերէն մերձելուն բառէն: Յոյներէն կոչուած է Եւսեպեան կամ Մեսապեան: Բիւզանդական կայսրութեան սահմաններուն մէջ անոր դէմ պայքարած է Ատտիկոս՝ պատրիարք Կ. Պոլսոյ, իսկ Հայաստանի մէջ՝ Ս. Մեսրոպ-Մաշթոց. 2. ած. աղմկասէր, գաղչելի, վաւառոտ, տուփոտ, պաղշոտ, ցոփ, ցանկասէր», Ը ե ր ե ճ ե ա ն, Տ օ ն ի կ ե ա ն, Տ է ր խ ա չ ա տ ու ը ե ա ն. 1992, 340:

ըիանոս, բորբորիտ, բորբորիտոն, բորբորիտոս համարժեք ձևերով՝ ածականի արժեքով «տղմասեր» միջուկային իմաստույթով (Հմմտ. «ա. Տղմասէր, գարշ, պիղծ. վավաշ. ցանկասէր. Վաւաշն այն և բորբորիտն շամիրամ. Խոր. ան. 14», Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1836, 507): Մեր կարծիքով, միջուկային «տղմասեր»-ն ի սկզբանե ներկայացել է փոխաբերաբար՝ «մեղսասեր»-ի համաբանությամբ (տես և Հմմտ. Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1836, 882 «Տղմասէր» բառահոգոված), հիմքում, անշուշտ, ոչ թե տիղմ սիրող խոզն ու գորտն են, այլ վերջիններիս այդ նսեմ հատկանիշից վերաիմաստավորվածները՝ պիղծը, ցանկասերը, վավաշոտը:

Հետագա վկայություններում նշված բառային տարբերակների իմաստային կառուցվածքը չի փոփոխվել, վկայվել են մեռած, հնացած, պատմական կամ կրոնական, հազվադեպ ցուցիչներով [Հմմտ. «(յուն. սկզբնապէս՝ borborianoii, բորբորեանք, որ թշնամիների բառախաղով փոխվեց borboros, ցեխ, աղբ, կեղտ), գ. 1. Բորբորիտեան աղանդաւոր (քրիստոնէական մի աղանդ). 2. Փոխ. Տղմասէր, աղտեղասէր, վաւաշոտ, ցանկասէր», Մալխասյանց. 1944, հ. Ա, 388, Հմմտ. նաև՝ Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, հ. 1, 339, Աղայան. 1976, 202]:

Մախազ¹³

Հին հայերենում իրացրել է ածականի արժեքով «անառակ» միջուկային իմաստույթը [Հմմտ. «ա. (որպէս թէ մարմնախազ) Անառակ. պազշոտ, խենէշ. ցոփ. լկտի. շուայտոտ. (Լիրբ հայեցուացք ևն, նշանակ է հոգւոյ մախազի)»], նաև գոյականի արժեքով մախազութիւն՝ «ցոփութիւն, լկտութիւն» (Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1836, 189, Հմմտ. նաև Ջախջախեան. 1837, 939, Աւգերեան, Ճէլալեան. 1865, 533):

Նախախորհրդային շրջանի արևմտահայ վկայություններից մեկում ցոփ-ը ծայրամասայինից տեղափոխվել է միջուկային (Հմմտ. Գաբամաճեան. 1910, 882), հետագա շրջանի վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքում հավելվել է սրիկա-ն (Հմմտ. «ած. ցոփ, անառակ, լիրբ, սրիկայ», Ճիգմէճեան. 1954, 961, նաև՝ Տէր Խաչատուրեան, Գանգրոնի, Տօնիկեան. 1968, 493, Ճերեճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան. 1992, 68), երբեմն բառույթը պահպանել է իր հինհայերենյան միջուկային իմաստույթը՝ ծայրամասայինների ընդլայնմամբ (Հմմտ. «ա. անառակ, ցոփ, կաթոտ, ցանկասեր, պազշոտ, շուայտ, յայրատ, լկտի, ճակաճան, բղձախոհ, իգամոլ, խենէշ, վաւաշոտ, բորբորիտ», Գալայան. 1938, 318):

Խորհրդային շրջանում բառույթը վկայվել է մեռած ցուցիչով (Հմմտ. Մալխասյանց. 1944, հ. Ա, 235), իսկ նույն շրջանի վերջին վկայություններում (Հմմտ. Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, Աղայան. 1976) ընդհանրապես բացակայում է, այսինքն՝ բառույթն ան-

¹³ Հր. Աճառյանը վկայաբերելով Հայկազյանը՝ դիտարկում է փոխառություն հունարենի «անամոթ» համարժեք ձևից (Հմմտ. Աճառյան. 1926, 227), ըստ Գ. Ջահուկյանի՝ ծագումն անհայտ է (Հմմտ. Ջահուկյան. 2010, 501):

ցել է դեպի պատիվ բառապաշար՝ վերածվելով հնաբանություն, նրան փոխարինել է միջուկային անառակ-ը:

Սատիր¹⁴

Հին հայերենում վկայվել է գոյականի արժեքով առասպելական «մեղկ, արբշիռ կապիկ» (հմմտ. «... է Կապիկ խենչ, ըստ առասպելաց՝ ընկեր արբշիռ չա՛յն դիոնիսոսի», Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1836, 699), նաև՝ «աներես կապիկ» միջուկային իմաստով ներդրվ (տե՛ս Աւգերեան, Ճէլալեան. 1865, 716):

Հետագա վկայություններում հանդես է եկել սատիրոս փոխառյալ գոլգաձևությամբ, չեզոքացվել է բառույթի հինհայերենյան բացասական «արբշիռ» միջուկային իմաստով [հմմտ. «(յուն. satyros, բակքոսին ընկերակցող կիսաստուածներ՝ ցցված մագերով, եղջիւրներով, այծի նման ոտներով), գ. 1. Այծամարդ, սատիր: Սատիրները սիրում էին նուազել, խմել, զուարճանալ, միմոսություններ անել... 2. Հնց. Կապիկ», Մալխասյանց. 1944, հ. Ա, 190], ավելի ուշ՝ այծամարդ միջուկային իմաստով արժեքով է որպես դիցաբանական տերմին և փոխաբերության հիմքով հավելվել է գոյականի արժեքով «զվարճասեր, հեշտասեր» ծայրամասային իմաստով [հմմտ. «(դից.) 1. Հունա-հռոմեական դիցաբանության մեջ՝ Դիոնիսի (հռոմեական Բաքոսի)՝ գինու և ուրախության աստծու խորամանկ, խրախճասեր ուղեկիցը՝ այծի ոտքերով, մորուքով ու եղջուրներով: 2. փխբ. Զվարճախոս՝ զվարճասեր ու հեշտասեր մարդ», Աղասյան. 1976, 1283, տե՛ս և հմմտ. նաև՝ Սուրբիասյան. 2009, 984):

Բառույթը գործառու է նաև «Կրոնական, առասպելական, հեքիաթային, ֆանտաստիկ մարդանման էակներ» բառափմաստային բազմության «Անտիկ և միջնադարյան առասպելաբանություն» բառափմաստային խմբում (հմմտ. ամազոնուհի, հանճար¹⁵, թզուկ, կենտավրոս, մուսա, սիրենա, սֆինքս, տիտան, կիկլոպ, էլֆ և այլն):

Բառույթի համանիշային շարքը ձևավորվել է միայն խորհրդային շրջանում [հմմտ. «գ. 1. (դից.) Այծամարդ, սատիրոս (հնց.) (հունահռոմեական դիցաբանության մեջ՝ Դիոնիսի (Բաքոսի) գինու և ուրախության աստծու խրախճասեր, հեշտասեր, խորամանկ ուղեկիցը՝ այծի մորուքով, ոտքերով ու եղջուրներով]: 2. Տե՛ս Զվարճասեր, Հեշտասեր», Սուրբիասյան. 2009, 984)՝ դրական-բացասական ոճական երանգավորմամբ:

¹⁴ «Սատիր (յուն.) հին յոյների հաւատալիքով՝ անտառային ոգի, որը գօտուց վար նոխազ էր, իսկ գոտուց վեր՝ մարդ փոքրիկ եղջիւրներով. սրանք յափշտակում էին նիմֆաներին. տոբոտ էին և զգայական: — Տոբոտ, իգամոլ մարդ» (հմմտ. Յարոսլավնեանց. 1912, 326):

¹⁵ Հռոմեական առասպելաբանությունում՝ «մարդու հովանավոր ոգի», ավելի ուշ՝ «ընդհանրապես բարի և չար ուժերի մարմնավորում» (հմմտ. Բարի ոգի, բարի հովանավոր, չար ոգի): Այս իմաստով ոգի (гений), հովանավոր ոգի, գերազույն, բարձրագույն մարմնացում իմաստով թիւները հնացած են (Ղարիբյան. 1977, 162: Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս Մարտիրոսյան. 2024, 246–248):

Սրտակեր

Հին հայերենում չի վկայվել, բառարանագրական առաջին վկայությունը հանդիպում է խորհրդային շրջանում՝ ուսուցիչների сержант-ի բառակազմական պատճենմամբ, «կեղեքող, տանջող» միջուկային իմաստով (Հմմտ. «ած. 1. Սիրտ ուտող՝ կեղեքող՝ տանջող: 2. Սիրտը ուտող՝ հոշոտող՝ ոչնչացնող [սրտակեր հող]: 3. փխբ. Սիրտ մաշող, հոգեկան մեծ տառապանք պատճառող: 4. փխբ. Կանանց մեջ մեծ հաջողություն ունեցող՝ նրանց սրտերը գրավող (տղամարդ) [Նա ... մի սրտակեր առյուծ է ... որի հրապույրն ընդունակ է կուրացնել ամենաառաքինի կանանց (Շիրվ.)]: 5. փխբ. Տղամարդկանց տանջող՝ սիրտ տառապանքների մատնող (կին) [Անուշիկ աղջիկ է նա, կմեծանա մեծ սրտակեր կղառնա (Վ. Տերյան)]» (Ա. Ղ ա յ ա ն. 1976, 1343, նաև՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, 346):

Բառույթը գործածական է առավելապես բառապաշարի գրական կամ գրքային շերտում, խոսակցականում առավել կայունացած է փոխաբերական կիրառությունը՝ ոճական նշույթավորմամբ՝ գրական, հաճախ նաև կատակային երանգավորմամբ:

Բառույթի հոմանիշային շարքում վերոնշյալ փոխաբերական կիրառությունն իրացնող բառույթ չի գրանցվել (Հմմտ. «Արտառուչ: 2. Արտամաշ, Տանջալից», Ս ու չ ի ա ս յ ա ն. 2009, 1030):

Սիրատածու

Հինհայերենյան վկայություններ չկան. խորհրդային շրջանում վկայված է բառույթի բայական ձևը՝ սիրատածել (Հմմտ. «1. չբ. Սեր տածել մեկի նկատմամբ: 2. նբ. Նույնն է՝ Սիրահետել», Ա Ղ ա յ ա ն. 1976, 1305), իսկ գոյականի արժեքով անձնանիշ ձևը՝ միայն թարգմանական բառարաններում՝ որպես ուսուցիչների ухажер բառույթի հայերեն համարժեք՝ «սիրահետող, քաշ եկող» միջուկային իմաստությամբ, գրական-բացասական երանգավորմամբ (Հմմտ. «ա., խսկց. 1. սիրատածու, սիրատածորդ, կանանց հետևից քաշ եկող: 2. Երկրպագու, սիրահետող, կավալեր», Ղ ա ղ ի բ յ ա ն. 1977, 1307): Հարկ է նշել, որ սիրատածու-ն իրացվում է բառապաշարի գրքային բառաշերտում:

Հոմանիշների համահավաք բառարանում վկայվում են սիրատածիկ, սիրատածորդ նվազ կիրառելի ձևերը [Հմմտ. «տե՛ս 1. Սիրահար (1): 2. Երկրպագու», Ս ու չ ի ա ս յ ա ն. 2009, 999]: Առավել համագործածական է շարքի սիրահար եզրը [Հմմտ. «գ., ա. 1. Սիրատած, սիրատածորդ, սիրատածիկ, սիրող, սիրարկու (հզվդ.), սիրավոր (ժող.), ծուռկ (գվռ.) (հակառակ սեռի նկատմամբ սեր տածող՝ սիրահարված մարդ)», Ս ու չ ի ա ս յ ա ն. 2009, 999]:

Բառույթի «սիրահետող» գրական երանգավորմամբ միջուկայինի կողքին «քաշ եկողը» հանդես է գալիս բացասական երանգավորմամբ՝ քաշ գալ ժողովրդախոսակցական հարադրություն՝ «սողալ» միջուկային իմաստությամբ (Հմմտ. «1. Գետնի երեսին քավելով շարժվել, սողալ: 2. Հետամտել, մեկի հետևից ընկնել: 3. Թրև գալ, թափառել: 4. Ման գալ: 5. Չարահար աշխատել»,

Աղ ա յ ա ն. 1976, 1553): Նշված բոլոր իմաստություններն էլ այսօր կենսունակ են:

Ինչ վերաբերում է հարադրություն հոմանիշային շարքի զարգացմանը, ապա այն ընդլայնվել է՝ եզրերի աստիճանակարգային փոփոխություններով (հմտ. Քաչ գալ, «տե՛ս 1. Հետամտել: 2. Սողալ: 3. Թափառել», Սոս - ք ի ա ս յ ա ն. 1967, 665, «տե՛ս 1. Թրեել: 2. Զբոսնել: 3. Սողալ: 4. Հետամտել: 5. Աշխատել», Սոս - ք ի ա ս յ ա ն. 2009, 74), երբ սողալ միջուկայինը մի դեպքում փոխարինվել է հետամտել-ով, մյուս դեպքում՝ թրեել-ով:

Բացի քննվող բառախմբաստային խմբից՝ սիրատածու բառությունը գործառու է նաև բառապաշարի «Սիրային հարաբերություններ, սիրահետում» բառախմբաստային հարացույցում՝ ոճական տարբեր երանգավորումներով [հմտ. (ժող.) սիրած, սիրուհի, սիրեկան, սիրեցյալ, (ժող.) յար, (անարգ.) քած, հարսնացու, փեսացու, (ժող.) աղջիկ, (ժող.) տղա, երկրպագու, տարփածու (-ուհի), (գրք.), հոմանի (-ուհի) (գրք.), (հնց.) սեղեխ (սիրային, սեռական կապի մեջ գտնվողներից յուրաքանչյուրը) և այլն] Այս հարացույցում այսօր էլ կենսունակ են նաև մի շարք փոխառյալ ձևեր, որոնք Հայերենի բառապաշարային իրողություններ են դարձել XIX–XX դդ. գեղարվեստական թարգմանական գրականության միջոցով, ինչպես՝ դոն ժուան¹⁶, լովելա¹⁷, սելադոն¹⁸, հետերա¹⁹:

Եզրակացություն

Քննվող բառությունների իմաստային կառուցվածքի զարգացման «ակտիվությունը» մեծապես կանխորոշված է եղել պատմական որոշակի ժամանակաշրջանում հանրության շրջանում գործառու բարոյականության արժեհամակարգի ընկալմամբ: Բառախմբաստային խմբի բառությունների քանակական կազմը հինհայերենյան շրջանից հիմնականում պահպանվել է՝ պատմական տարբեր փուլերում «կուտակելով» նոր բառախմբաստային տարբերակներ, որակական փոփոխություններ: Չնայած իմաստային կառուցվածքի աստիճանակարգային փոփոխություններին՝ քննվող բառությունները հինհայերենյան շրջանից պահպանել են ցուրտբարոյություն գերիմաստությունը:

¹⁶ «[<Дон-жуан < իսպ. Don Juan], գ. ած. 1. (գրկն.): Գրականության և արվեստի ստեղծագործությունների հերոս: Ասպետի կերպար՝ կնամոլ: Ստեղծվել է Վերածնունդի դարաշրջանում իսպանական ժողովրդական լեգենդի հիման վրա: 2. փխբ. Սիրային արկածներ որոնող, կնամոլ» (հմտ. Հ ա յ Ր ա պ ե տ յ ա ն. 2011, 166):

¹⁷ Ծագում է Lovelace հատուկ անունից, որը XVIII դարի անգլիացի գրող Ս. Ռիչարդսոնի «Կլարիսա Հաուդոու» վեպի կնամոլ հերոսն է (հմտ. Ղ ա Ր Ի Բ Յ ա ն. 1977, 445):

¹⁸ Հնացած ձև է, որը հեզնաբար «կաշուն, որպես կանոն, ծեր սիրատածուն, կանանց հետևից քարշ եկողն» է, որը, ի դեպ, վկայվել է միայն թարգմանական բառարաններում (հմտ. Ղ ա Ր Ի Բ Յ ա ն. 1977, 1086):

¹⁹ «[<гетера < հուն. hetaria, բառացի՝ ընկերուհի, սիրուհի], գ. 1. (պատմ.): Հին Հունաստանում՝ ազատ կյանք վարող չամուսնացած կին: 2. Թեթևաբարո կին, տարփուհի» (հմտ. Հ ա յ Ր ա պ ե տ յ ա ն. 2011, 325):

Բառախմաստային խմբի գրեթե բոլոր բառույթների խմաստային կառուցվածքը կրել է էական փոփոխություններ հինհայերենյան շրջանից՝ բառի նույնականություն տեսակետից. փոխվել է բառի նշանակողական-խմաստատարբերակիչ բաղադրիչը փոխաբերության (հաճախ՝ փոխանվանական) տիպով, երբ գերիմաստությունը պահպանմամբ պատմական զարգացման ընթացքում նախնական փոխաբերական նշանակությունն ամրապնդվում է որպես հիմնական (հմմտ. բաքոսի քրմուհի):

Դիտվել է բառույթների հոմանիշային շարքի ընդլայնում՝ շնորհիվ փոխաբերացման (հմմտ. սատիր), ինչպես նաև բառախմաստային տարբերակների աճ ոճական նշույթավորվածությամբ կայուն կապակցություններում (հմմտ. բաքոսյան հանցանք, Բաքոսի երկրպագու և այլն):

Դիտվել է փոխառյալ բառերի ներխուժում ենթաբաղմունքային տիրույթ (հմմտ. դոն ժուան, լովելաս, սելադոն, հետերա), նաև՝ բառակազմական պատճենմամբ (հմմտ. սրտակեր):

Դիտվել է բառույթների գործաբանական բաղադրիչի փոփոխություն²⁰ (հմմտ. սիրահետող — քաջ եկող), ընդամին նաև՝ ոճական նշույթավորմամբ (հմմտ. սրտակեր):

Դիտվել են բառույթներ, որոնց բոլոր խմաստությունները մնացել են միջուկային, ծայրամասային և պոտենցիալ խմաստություններ չկան: Վերջին իրողությունը պայմանավորված է մարդու ճանաչողական գործունեությամբ, երբ պատմական որոշակի փուլում լեզվակիրների մտածական տիրույթում արդիականությունը կորցնում են որոշ մասնավոր երևույթներ և հասկացություններ՝ վերածվելով հնաբանությունների և պատմաբանների (հմմտ. մախազ, բորբորիտ):

Հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներում որոշ բառույթների խմաստային կառուցվածքում նկատվել են աստիճանավորման զգալի տեղաշարժեր. նրանց միջուկային և ծայրամասային խմաստությունները տվել են իրենց ածանցյալները «Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի այլ բառախմաստային ենթաբաղմունքայիններում և խմբերում՝ նաև փոխաբերական խմաստի կայունացմամբ գործառնելով բառապաշարի տարբեր շերտերում և ոճերում [հմմտ. ՍԱՏԻՐ ≈ ամազոնուհի, հանճար²¹, թզուկ և այլն, ՍԻՐԱՏԱ-ԾՈՒ ≈ (ծող.) սիրած, (ծող.) յար և այլն]:

Քննությամբ վերստին փաստվեց այն հայտնի իրողությունը, որ լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում փոփոխվում է ոչ թե բառախմաստային դաշտ-համակարգը, այլ նրա ներսում առկա որոշ հատվածներ և հարա-

²⁰ Երբ բառախմաստի դրական երանգավորումից անցում է կատարվում դեպի բացասականը, և հակառակը՝ բացասականից՝ դրական կամ չեզոք՝ պահպանելով կամ փոփոխելով հիմնանշանակային բաղադրիչը գերիմաստություն:

²¹ Հռոմեական առասպելաբանությունում «մարդու հովանավոր ոգի», ավելի ուշ՝ «ընդհանրապես բարի և չար ուժերի մարմնավորում» (հմմտ. բարի ոգի, բարի հովանավոր, չար ոգի): Այս խմաստով ոգի (гений), հովանավոր ոգի, գերագույն, բարձրագույն մարմնացում խմաստությունները հնացած են (տե՛ս Ղ ա ր ի բ - յ ա ն. 1977, 162):

բերությունները նրանց միջև, որովհետև բառախմբաստային դաշտի ցանկացած անդամ բազում իմաստային թեկերով հարաբերություններով կապված է ողջ համակարգում գործառույ մյուս անդամների հետ: Արդյունքում վերջինիս ամեն մի փոփոխություն հանգեցնում է լեզվի բառային կազմի որակական տեղաշարժի:

Արտաշես Մարտիրոսյան – բ. գ. թ., իս. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հայոց լեզվի և նրա դասականի մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ բառակազմութուն, բառային իմաստաբանություն, թարգմանություն տեսություն: Հեղինակ է 1 եռալեզու բառարանի, 1 մենագրության և ավելի քան երկու տասնյակ հոդվածների:

ORCID:0000-0003-1289-3275. artashesmartirosyan@yandex.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աթայան Է. 1981, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 392 էջ:

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Կ. Ա-Բ, «Հայաստան» հրատ., 1612 էջ:

Աղայան Էդ. 1980, Հայոց լեզու, Ա պրակ / Բառագիտություն, Երևան, «Լույս» հրատ., 528 էջ:

Աղայան Էդ. 1984, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 372 էջ:

Աճառյան Հր. 1926, Հայերեն արմատական բառարան, Երեւան, Կ. Ա-Դ, Երեւանի համալսարանի հրատ., 2705 էջ:

Աճառյան Հր. 2013, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 365 էջ:

Ազերեան Մ., Ճեղալեան Գ. 1865, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, Սուրբ Ղազար, 856 էջ:

Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1836, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, տպ. ի սրբոյն Ղազարու, 2235 էջ:

Բեդիրյան Պ. 1973, Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում / Բառախմբաստի փոփոխություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, 553 էջ:

Բեդիրյան Պ. 2010, Հայերեն շրջասությունների բառարան, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 316 էջ:

Բեդիրյան Պ. 2019, Բառերի և արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարան [թեզաուրուս], Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 280 էջ:

Գաբամաճեան Ս. 1910, Նոր բառագիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, տպագրութիւն Ռ. Սազաեան, 1414 էջ:

Գայայեան Յովհ. 1938, Բառարան գանձարան հայերեն լեզուի, Գահիրե, տպագրութիւն Գալֆա, 550 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ՊԱ հրատ., 614 էջ, 1972, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ՊԱ հրատ., 719 էջ, 1974, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ՊԱ հրատ., 576 էջ, 1980, հ. 4, Երևան, ՀՍՍՀ ՊԱ հրատ., 830 էջ:

Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երևան, հեղ. հրատ., 643 էջ:

Ղարիբյան Ա. 1977, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1472 էջ:

Ճերեճեան Գ., Կ. Տոնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, Կ. Տոնիկեան և Որդիք հրատ., 2530 էջ:

Ճիզմէճեան Պ. 1954, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 1–2, Հալէպ, տպ. Անի, 2224 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ, 608 էջ, 1944, հ.2, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 512 էջ, 1944, հ. 3, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 614 էջ, 1945, հ. 4, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 646 էջ, 1945:

Մարտիրոսյան Ա. 2023, «Անձերի անվանումներ» բառափմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի քննություն. – «Բանբեր հայագիտության» (Երևան), № 1, էջ 168–183:

Մարտիրոսյան Ա. 2024, «Դև» բառույթի առասպելաբանական նախասկիզբը և իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում. – ՀՀ ՊԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (Երևան), № 2, էջ 242–257:

Մուրվալյան Ա. 1955, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, ՀՍՍՌ ՊԱ հրատ., 435 էջ:

Յարութիւնեանց Մ. 1912, Բացատրական բառգիրք – Օտարազգի բառերի եւ օտարազգի բառերի ու դարձաւորների, Ալէքսանդրապօլ, Յ. Սանոյեանցի տպ., 444 էջ:

Զախջախեան Մ. 1837, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 1535 էջ:

Զահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀԽՍՀ ՊԱ հրատ., 747 էջ:

Զահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ՊԱ հրատ., 319 էջ:

Զահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., 820 էջ:

Ստ. Մալխասեանցի դասախօսութեան բովանդակութիւնը» (կարդացված հոկտեմբերի 29-ին). – «Մշակ» (Թիֆլիս), 03. XI. 1910:

Սուքիասյան Ա. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ՊԱ հրատ., 685 էջ:

Սուքիասյան Ա. 2009, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1242 էջ:

Տէր Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Կ. Տոնիկեան Փ. 1968, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, Կ. Տոնիկեան և Որդիք հրատ., 932 էջ:

Տէր-Ղազարեան Ա. 1908, Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի եւ գործածութեան մէջ մտած մտքերի ու դարձածքների, Թիֆլիս, տպ. «Էպոխա», 308 էջ:

ИЗУЧЕНИЕ СЕМАНТИЧЕСКОЙ СТРУКТУРЫ ЛЕКСЕМ ОДНОЙ МИКРОСИСТЕМЫ ЛЕКСИЧЕСКОГО МНОЖЕСТВА «ИМЕН ЛИЦ»

АРТАШЕС МАРТИРОСЯН

Резюме

Ключевые слова: лексическая семантика, лексико-семантическое множество, лексема, семантическая структура, архисема, ядерная сема, периферийная сема.

Предмет изучения лексикологии сводится прежде всего к диахроническому рассмотрению внелингвистического, социально-исторического характера лексического состава языка, для которого лексикография является незаменимым источником. Данное исследование основано на социолингвистическом и системно-семантическом аспектах изучения лексики. Первый предполагает характеристику и классификацию лексем по внешним социально-историческим факторам (заимствованиям из разных форм языка), по особенностям употребления слов (архаизмы, неологизмы), по профессиональным сферам употребления слов (термины)), в случае второго центром рассмотрения является внутренняя смысловая структура лексем, взгляд на лексику как на систему. Лексическая группа «Разврат, безнравственность, распутство, винное пристрастие» рассматривается по смысловой общности входящих в нее лексем, в контексте изменения качественного и количественного состава последних на разных этапах развития армянского языка.

Арташес Мартиросян – к. филол. н., доцент кафедры армянского языка и методики его преподавания АГПУ. Научные интересы: словообразование, лексическая семантика, теория перевода. Автор 1 трехязычного словаря, 1 монографии и более двух десятков статей.

ORCID:0000-0003-1289-3275. artashesmartirosyan@yandex.ru

STUDY OF THE SEMANTIC STRUCTURE OF LEXEMES OF ONE
MICROSYSTEM OF THE LEXICAL SET “NAMES OF PERSONS”

ARTASHES MARTIROSYAN

Summary

Keywords: lexical semantics, lexical-semantic set, lexical-semantic group, lexeme, semantic structure, archiseme, nuclear seme, peripheral seme.

The subject of the study of lexicology comes down primarily to a diachronic consideration of the extra-linguistic, socio-historical nature of the lexical composition of a language, for which lexicography is an indispensable source. This study is based on the sociolinguistic and systemic-semantic aspects of the study of vocabulary. The first involves the characterization and classification of words according to external socio-historical factors (borrowings from different forms of language), according to the peculiarities of the use of words (archaisms, neologisms), and according to professional areas of use of words (terms). In the case of the second, the center of consideration is the internal semantic structure of the lexeme, view at the vocabulary as a system. The lexical group “Debauchery, immorality, harlotry, drunkenness” is considered according to the semantic community of the lexemes included in it, in the context of changes in the qualitative and quantitative composition of the latter at different stages of the development of the Armenian language.

Artashes Martirosyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the Department of Armenian Language and Teaching Methods of the ASPU. Scientific interests: word formation, lexical semantics, translation theory. Author of 1 trilingual dictionary, 1 monograph and more than two dozen articles. ORCID: 0000-0003-1289-3275. artashesmartirosyan@yandex.ru